




ՀԱՐՑԱԶՐՈՒՑԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՆՔ

- Պաշտոն** հարցազրուցավար
- Աշխատանքի տեսակը** գործարքային (ծառայությունների պայմանագիր)
- Վայրը** Երևան և ԶԶ մարզեր
- Վերջնաժամկետ** 2023 թ., մայիսի 31

«Ջեռագրտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան» (ՀՌԿԿ-Հայաստան) հիմնադրամը փնտրում է հարցազրուցավարների՝ **տնայցային դեմառդեմ հարցման մեթոդով** հանրային կարծիքի ուսումնասիրության նպատակով:

Իսկ հիմա ավելի մանրամասն



Ի՞նչ է ենթադրում աշխատանքը

Հարցազրուցավարները տնայցերի միջոցով դեմառդեմ հարցումներ են իրականացնում Հայաստանի ողջ տարածքում: Մինչև բուն աշխատանքների սկսվելը մեր թիմն իրականացնում է երկօրյա դասընթաց աշխատանքի մանրամասներին ծանոթանալու համար:

Ի՞նչ ենք առաջարկում քեզ

- ծառայությունների **պայմանագիր**
- աշխատանքային **փորձի** ձեռքբերում
- ամբողջ Հայաստանով **ճամփորդելու** հնարավորություն
- ազատ** գրաֆիկ
- կարճ ժամանակում **գումար** վաստակելու հնարավորություն
- ճանապարհածախսի **փոխհատուցում**

Ի՞նչ ենք ակնկալում քեզնից

- մասնակցել հարցազրուցավարների դասընթացներին
- իրականացնել դեմառդեմ հարցազրույցներ՝ տրված իրահանգներին համապատասխան
- մշտական կապի մեջ լինել դաշտային աշխատանքների համակարգողների հետ
- պատրաստել կարճ հաշվետվություններ աշխատանքների իրականացման մասին

Նաև ցանկալի է, որ ունենաս

- բարձրագույն կրթություն՝ նախընտրելի է հասարակական գիտությունների ոլորտում (ուսանողները նույնպես կարող են դիմել)
- հայերենի գերազանց իմացություն
- հարցազրուցավարի աշխատանքային փորձ (ցանկալի է դեմառդեմ հարցման մեթոդով)
- (տեղաշարժվելու) ճկունություն տարբեր բնակավայրերում հարցումներ անելու համար
- պլանշետային սարքերի հետ աշխատելու կարողություն
- գրագետ հաղորդակցվելու հմտություններ
- սեղմ ժամկետներում արդյունավետորեն աշխատելու կարողություն
- պատասխանատվություն, ուշադրություն և ճշտապահություն

Ինչպե՞ս դիմել

Պարզապես ուղարկիր ինքնակենսագրականդ (CV) hr@crcc.am էլ. փոստի հասցեին **մինչև 2023 թ. մայիսի 31-ը**՝ նամակի վերնագրում նշելով «Հարցազրուցավար»: Արդյունքների մասին կտեղեկացվեն միայն նախնական ընտրությունն անցած դիմորդները: